## ԳԵՐ. ԱՂԱՓԻՐԵԱՆՑ.

Ի 1-ն ամսոյս Գեր. Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանց վերադարձաւ յԱղէքսանդրապօլ։

## ԳԵՐ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Հնդ. և Պարսկ. Հայոց Նորընտիր Առաջնորդ Գեր. Գրիգորիս Եպիսկոպոս Յովհաննէսեան յ3-ն ամսոյս մեկնեցաւ աստի երթալ ի Սպահան ի Ս. Խաչ վանս։

## ՆՈՒԷՐ.

Մեծարգոյ Պ. Յակոբ Պօղոսեան Թօփճեանց Գզլարեցի հինգ հարիւր ռուբլի նուէր առաքեց ի նպաստ վերանորոգութեան Տաճարի Ս. Էջմիածնի։

Մեր շնորհակալութիւն կը յայտնեմք յիշեալ բարեպաշտ անձի, կը գովեմք նորին բաղձանքը և եռանդը ի պայծառութիւն Մայր Աթոռոյս։

## ԸՆԾԱՅՔ.

Մեծարգոյ Պարոնայք Նիկողայոս Տէր Յակոբեանց և Աւետիք Էնֆիէճեանց՝ առաջինը քառասուն հատ Մայրենի լեզուի և 10 հատ Գործն. Թուաբանութեան գրքերը, և միւսը 5 հատ Համառօտ Քերականութեան Չամչեան՝ ընծայեցին Հոգ. Դպրոցաց Վաղարշապատայ, և խնդրուած է ի մենջ՝ ի գլխոց Հոգաբարձութեան և ուսանողաց՝ շնորհակալութիւն յայտնել յիշեալ բարենպատակ ընծայատուաց։

## ՄԵՐՈՆՑ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵՆԱՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ.

(Ա. Բոսէն Ֆայըրդ)։

Արդ. նայելով Հայի այդ կողմերին, այսօր Եւրոպացին որչափ ալ իր ամուսնական կետին մէջ նոր գիւտեր անէ, որքան ալ հրաշալի և հիանալի հնարքներ ձեռք բերէ. ես, իմ կողմէն կբաղձայի և կփափագէի ամենայն սրտով, որ Հայը իր ամուսնական օրինաց հիմնական դրութիւնը մազի մը չափ չխախտեր, և միայն դորա արտաքին սովորութեանց կարգ կանոն դնէր։ Կան մեր մէջ մի տեսակ անձինք, որոնք ինչ և իցէ կետէ շլացած, թեթևամտութեամբ ոչ թէ միայն կարծած են թէ քաղաքական ամուսնութիւնը մի երևելի բան է, հապա և գծայն գալցէ Անգլիացի. Ամերիկացի երևակայելով ցանկացած են այդ կետի մեր մէջ լինելն ալ. կան նոյնպէս մի երկրորդ դասակարգի անձինք, որոնք անհեռատեսութեամբ բացառութիւն սեպուած մի քանի լծակցաց զզուելի կեանքը իւրեանց օրինակ առնելով կարծած են, թէ Հայի ամուսնական կենաց մէջ բաժանումն լինելու կարելութիւնը, որ լինէր, լաւ կլինէր։ Այս ցանկութիւնները կարելի է թէ իրանց լաւ կողմերն ալ ունին, զորս ըմբռնելը իմ կարողութիւններից վեր է։ Սակայն ըստ իմ հասկացողութեան դորանք արտադրուած են փափկասիրութիւնից, չռայլութիւնից, պեղխութիւնից, և այլ բազում աղօրինաւորութիւններից. Այդ տեսակ ամուսնութիւնքը ըստ ինձ մարդկանց բարոյականը, ընտանեկան մաքրութիւնը, քերդաստանական վայելչութիւնը և այլ ամենայն օրինաւորութիւնք կեղծանեն։ Շատ անգամ իսլամականութեան ստութիւնները հերքել կամեցող անձինք իւրեանց փաստերից մէկն ալ այս են դրած, թէ «Արովհեան այն տեղ բաժանումն կայ, ուրեմն և անդ օրինաւոր քերդաստան և ընտանեկան կենաց սրբութիւն ու անդորրութիւն չէ կարող լինել»։ Արդարև այդպէս, վասն զի Մահմեդական աղջիկ մը իւր հաւասարակից այր մը հետ պսակուելէն վերջը, որքան ալ այդ զուգակիցքը սիրեն մէկ զմեկ և համակրութիւնք ունեն առ միմեանս, այնու ամենայնիւ չասեմ թէ անգամ, նոքա կասաչեն, հետևապէս մի կարգին ընտանիք չեն կարող կազմել իւրեանց հասարակութեան համար. ըստ որում բաժանումն լինելու հնարը, անխտրումն ըլլալու ահն ու երկիւղը իւրեանց միութեան օրից, կարող է նոցա գող չինել. կինը մարդից և մարդը կնոջից կփափագէ մի բան իրան սեպհականացնել։ Սակայն այն լծակիցքը, զոր քրիստոնէական սուրբ օրէնքն է միացրած, բոլորովին այլապէս են, Եկեղեցին նոցա մի մարմին է ձևացրած, մինչև ի մահ միմեանցից չզատուելու և չբաժանուելու դաշնով, միմեանց ընկեր և բարեկամ դառնալու, պաշտպան և պահապան լինելու պայմանաւ։ Ինչ հրաշալի կետ, որչափ գերագոյն միացումն, որմէ հետէ, մնաք և ոչ. երջանկութիւնք և դժբաղդութիւնք, յաջողութիւնք և փորձանք, և այլ ամենայն դէպք և պատահմունք նոցա երկուսին է։ Նոքա իւրեանց սուրբ պսակին յետ, գիտենալով հաստատ կերպով թէ, պարտական են այս կեանքը բոլորը միասեղ անցուցանել, աշխատում են անկուն ձևով իւրեանց վիճակը և դրութիւնը բարելաւեցնելու. ջանք են առնում անդադար, միմեանց սատար և նեցուկ դառնալու, թև և թիկունք լինելու, տուն տեղ ձևացնելու, զաւակներ զարգացնելու, բարի համբաւ և համարում ստանալու, մի խօսքով, իւրեանց հասարակութեան համար մի կարգին ընտանիք կազմելու։ Բայց քաղաքական ամուսնութեամբ և բաժանումն կարելի լինող պսակը միացող, հարսն ու փեսան, ուչ թէ չուտ արդեօք չեն ունենար միմեանց հետ այն առնչութիւնները, որոնց մէջ այսօր կգտնուին մեր գրոցի թուրքերը, կամ ուրիշ խօսքով ասելով, նոքա արդեօք որքան զանազանութիւն կունենան Մահմեդական լծակիցներից։ Առհասարակ ինձ կթուի, թէ այդ պայմաններով ամուսնացող զուգակիցների երջանկութեան թելը կարճ կլինի միշտ. Նոքա իրանց երիտասարդութեան օրերը անցուցանելէն յետ, եթէ բաժանումն ալ առաջ եկած չլինի, ծերութեան մէջ շատ և շատ անգամ դժբաղդ կլինին։ Սակայն որչափ բաղձալի է տեսնել պառաւել Հային, իւր ծեր կողակցի հետ միմեանց պահելով և պաշտպանելով ապրիլը և լի մի ապագայ յուսով երջանկութեամբ հանգիստ ու անդորր օրեր անցուցանել, մանաւանդ եթէ այդ կետը պսակուած լինի լաւ ժառանգներով։ Հայը արդի դարին մէջ այնքան ապահով ու խաղաղ կլինի անշուշտ, որքան ինքը իր կենաց բոլոր պարագաների հիմնական կետերը նախնեացմէ չհեռացնել և հեռի կմնայ առանց խիստ ընտրութեան օտարների սովորութեան հետամուտ լինելուց։ Չենց իրանք քաղաքական պսակ և բաժանումն կարելի լինող ամուսնութեան ցանկացող անձինքը եթէ լաւ խորհեն և խոկան, մի փոքր եսականութիւնը, օտարին մէջ ամուրներ չինելու երևակայութիւնը, դառնութիւնը, յամառութիւնը և այլ այսպիսի կետերն դէն դնելով կհամոզուին անշուշտ, որ իրանց կարծիքը սխալ և մեզ շատ և շատ վնասակար է։

Արդ մեր մէջ այս տեսակ նոր հարցեր շատ է զարթներ և կզարթնի, որոնց վերայ ի հարկէ բնաւ զարմանալ հարկ չէ։